

Ներկարէր, գիշեր, մեծ տարի դարձիր,  
Դաժան, սև խաւար, իջիր, թանձրացիր,  
Իմ մուրազն առայ այսօր իրիկուն—

Վերջապէս եկաւ հիւր եարս թագուն,

Եօթ սարի յետև կանգնիր, արշալոյս,

Թէ չէ կը փախցնէ սիրածիս քո լոյս,

Թող յաւէտ այսպէս խաւարում մընամ,

Միայն եարըս միշտ կըծքիս ունենամ: (էջ 43)

Անն այս ոգևով են ներշնչուած Բուշակի բոլոր բանաստեղծութիւնները, որ զուտ քնարերգական պարզ հնչիւն ունին, զգացմունքներ են արտայայտում և հեռու են որևէ տհնդհնցիայից. իսկական սիրոյ քրքիչ է Բուշակը:

2. Ղազ. քահ. Յովսէփեան. ակնարկներ Ուտիացի և մահմեդական հայերի մասին Թիֆլիզ. 1904 էջ 102

Ուտիացիք մի հին, պատմական, ազգի մնացորդներն են, որ նախնի դարերում ընդունելով հայոց դաւանած կրօնը՝ հետզհետէ ձուլուել են հայերի հետ՝ պահպանելով մասամբ իրենց մայրենի լեզուն: Մեր պատմագիրների վկայութեամբ սբ. Մեսրոպը Աղուանից ազգի համար ևս այրուբն է գտնում. այս Աղուանից ազգի սերունդներն են համարուում ուտիացիք, բայց տարաբաղաբար սրանց գրականութիւնից ոչ մի հետք չէ մընացել և այսպիսով հնար չկայ իրական փաստերով ապացուցանելու այժմ մեր մատենագիրների վկայութիւնը: Այս հետաքրքրական պատմական ժողովրդի մասին ցայժմ ոչ մի լուրջ հետազօտութիւն չէ հրատարակուել. Մակար Բարխուդարեան սրբազանի աշխատութիւնը պատմական և տեղագրական ուսումնասիրութիւն է («Աղուանից երկիր և դրացիք») իսկ Սարգիս արքեպ. Ջալալեանի տուածը՝ կցկտուր տեղեկութիւններ («Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան») տեղագրական նկարագրութիւնների շարքում):

Լազարեան ճեմարանի ուսուցիչ Ստ. Տէր-Սարգսեանի մի շարք յօդուածները («Մեղու Հայաստանի») լրագրում ուտիացիների մասին անաւարտ մնալով՝ նոյնպէս մի ամփոփ գաղափար չեն կազմում այդ ազգի անցեալի և ներկայի մասին:

Գրքոյկիս հեղինակը Ուտիացի լինելով՝ բարի ցանկութիւն է ունեցել այդ թերին լրացնելու և իւր հայրենակիցների ներկայ գրութիւնը նկարագրելու. սակայն տարաբաղաբար նրա ցանկութիւնը մնացել է լոկ ցանկութիւն, իսկ տուածը

շատ աննշան ու հարևանցի Եթէ 102 էջը զտենք աւելորդ ֆրագններից ու դատողութիւններից՝ տեղը հազիւ թէ մի լուրջ լրագրական յօդուածի պարունակութիւն մնայ. հեղինակի շեշտն էլ շատ շուտ շուտ է աչքի ընկնում: Արժ. Յովսէփեանը շարունակ խրատում է ուրիշներին, որ զնան իր հայրենիքը. «զէհ, հայրենասէր տիկիներ և ընկերասէր Հայ օրիորդներ, Եթէ կամենում էք ձեր կեանքում մի բարի և օգտակար գործ կատարել, ամառնային ամիսներին շրջեցէք Ուտիացոց երկրում, որոնք ձեզ սիրով և զրկաբաց կընդունեն: Դուք նրանց թէ շատ բան կսովորցնէք և թէ նրանց նիստ ու կացը ուսումնասիրելով ու հետազօտելով՝ ինքներդ ևս շատ բան կսովորէք» (էջ 40: Այսպիսի շեշտով խօսող հեղինակը իւր հայրենիքի մասին տեղեկութիւններ է քաղում վերոյիշեալ Սարգիս արքեպիսկոպոսի վաղուց ննացած աշխատութիւնից: Իսկ նոր բան ասելու համար տեսէք թէ ի՞նչ զօրեղ փաստերի կամ ապացոյցի է դիմում. «Թէև գեր. Մ. եպ. Բարխուդարեանը՝ իւր «Աղուանից երկիր» գրքի 292 երեսում, Հայից (?) մահմադական դարձած ծխերի թիւը հաշոււմ է 15480 կամ 77400 հոգի, բայց ինձ թում է (-), որ ըոպէիս թրքացած Հայերի թիւը անշուշտ (?) կլինի 100 հազար հոգի» էջ 65: Տէր հայրը նաև հմուտ լեզուաբանական բացատրութիւններ գիտէ տալ. «Բել-Ուտիստան» (!) աղաւաղուել և մահմեդականների բերանում փոփոխուելով՝ դարձել է Բելուշիստան» (էջ 61). ահա և գիւղերի անունների լեզուաբանութիւնը. «Օրաբան՝ օրուայ գործելու տեղ (?) կամ օրուայ խօսք» (!) «Բունգիւտ՝ քունը գտնող կամ քուն գտնելու տեղ (?)». «Կոխմուխ՝ մուխը կոխել ոտքով» (!) «Դութղաշէն՝ խութի վրայ շինուած գիւղ», «Բարմուղիս-քուրմերի բազմութիւն(?) կամ քուրմերի սանդուղ» (!). այսպիսի անհեթեթութիւններ չէինք կարող սպասել... Աւելի հետաքրքիր է այս վերջին բացատրութեանն աւելացրած ծանօթութիւնը. « Ի դէպ է ասել, որ Զաքարիայ շրջանի Գուրմուղիսը, իւր համանուն գետի կատաղի ալիքների պղտոր ջրով և քուրմերի բազմութեամբ ոչ մի վնաս չեն տուել հայ եկեղեցուն և մեր ժողովրդին, այն ինչ, Օրբազարի (Խրիմում) անատամ Հայ քուրմը (բահանայ, Տէր ողորմեա) պղծեց ամբողջ Խրիմի թերակղզին իւր երկարամեայ անգործունէութեամբ, թէ մեր եկեղ. եւ թէ մեր ժողովրդին անփոխարինելի, ահագին վնասներ տուեց, բայց մնաց անպատիժ, իբրև զառնազգեստ զայլ եւ որպէս «սուտ ճգնատը» (էջ 71): Ա՛յս ինչ է. գրիչս արդէն հրաժարոււմ է գրելուց. այս

մարզարտաշար տողերը գրում մի քահանայ՝ իւր պաշտօնակցի մասին. այլանդակութիւն...:

3. Վրաց գրականութիւնից № 6. է. ՆԻՆՕՁՎԻԻ. Գօղիա Ուրշիլի. (պտտմուածք) հրատտ. Գ. Աանեանցի. Թարգ. Դ. Կ.: էջ 40 Թիֆլիզ 1905

Հայ բանիմաց համարակութիւնը, տարաբաղտաբար, շատ քիչ տեղեկութիւն ունի մեր դրացի և համարեան բաղդակից վրաց ազգի նոր և նորագոյն գրականութեան մասին. մենք դիտենք նրանց մի քանի անուանի բանաստեղծների ու լրագրների անունները և աւելի ոչինչ: Ի՞նչ գրական հոսանքների է ենթարկուած նրանց մատենագրութիւնը, ի՞նչ աստիճանի զարգացման է հասել նրանց վիպագրութիւնը, ի՞նչ իդէալներ են ոգևորում նրանց գրադէտներին — այս ըտլորը պարզ չէ մեզ համար: Սակայն շատ և շատ ցանկալի է, որ այս մութը մնացած խնդիրները պարզուէին. անհրաժեշտ է, որ նրանց աչքի ընկնող վիպասանների աշխատանքները թարգմանուէին վրացերէն: Գրական ծանօթութիւնը կնպաստէր նրանց և մեր ինտելիգէնտ շրջանների հոգեկան հաղորդակցութեանը և մտերմութեանը, որ այնչափ անհրաժեշտ է և այնչափ ցանկալի է համարում այժմ երկու կողմից էլ: Առանց այս հոգեկան հաղորդակցութեան դժժուար թէ հիմնական և տեւական բարեկամութիւն կարելի լինի հաստատել երկու ազգերի մէջ. ոգևորիչ ճառերը, լրագրական յօդուածները, ճիշտ է, նոյնպէս ներգործում են մտքերի վրայ, բայց դրանց ազդեցութիւնը անցողական, մակերևոյթային է, խոր արմատներ չի կարող ձգել:

Այժմ, մեր աչքի առաջ, այնպիսի ցնցող երևոյթներ են տեղի ունենում վրաց հասարակութեան ինտելիգենցիայի և մանաւանդ գիւղաբնակ դասակարգերի մէջ, որ մենք չենք կարող ըմբռնել, հասկանալ, եթէ տեղեակ չենք վրաց վերջին տասնամեակների մտաւոր զարգացմանը և նրանց ժողովրդի սօցիալական դրութեանը: Հայ ժողովրդի նման, վրաց ազգի մեծամասնութիւնն էլ երկրագործութեամբ է պարապում և շարունակ հողի հետ գործ ունի, հողի սակաւութիւնը, ինչպէս հայ գիւղացիների, նոյնպէս էլ վրացի երկրագործների մէջքն է կտրել և նրանք էլ մեր չարքաշ ռոանչպարներին նման աղքատացել տնտեսապէս քայքայուել են: Հողի սակաւութիւնն էլ աւելանալով զանազան հարկերի շատութեանը և ուրիշ շատ պատճառներ գիւղական դասակարգի դրութիւնն անտանելի է